

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Տ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ազգանուն տիրմինը հայերենում ինքնուրույն կազմություն է, քանի որ ձևավորվել է անցյալ դարի երկրորդ կեսին, երբ մեկանում դեռևս կենդանի էին «ազգ» արենակցական խմբի ավանդույթները: Հայկական ազգանունը կարելի է սահմանել իբրև արական արենակցական կապով միավորված մարդկանց ընդհանուր անուն:

Հայկական ազգանունների ձևավորման ընթացքին հետևելիս ելակետ ենք ընդունում նաև ազգանվան՝ ժառանգաբար անցնելու վերաբերյալ դրույթը, որ առանձին նշանակություն է ստանում հատկապես այս կամ այն երևույթի, առանձին վերցրած փաստի ճիշտ գնահատման ժամանակ: Մ. Օրմանյանը և Հ. Աճառյանը ուշադրություն են դարձնում այն փաստի վրա, որ VI դարում Ներսես Բ Բագրևանդցու թուղթը ստորագրողների մի մասը «...փոխանակ յուր նախարարական ցեղին՝ պարզ հայրանունով հիշված են»¹: «VI դարում հայերը պարսիկներից վերցնում են հոգնակի ան, եան (յան) մասնիկը և դարձնում են նրանց նման ազգանուն»²: Այսպես, «Գիրք թղթոցում» անվանման այդ բանաձևերը բերված են հետևյալ կերպ. Համազասպ ի Գուգվառամեան ի տանէ Մամիկոնէից, Սամէղ յԱրտաւազդան սպարապետ, Գրիգոր ի Հմաեակ, Սահակ ի Վարդաշան, Դատոյ ի Գարջուղեան, Գրիգոր և Վարդան ի Վասակայ, Զարակ ի Գղաւոնան, Վարազ Յոհան ի Յոհանան, Վարդան ի Մուշեղեան, Սահակ ի Հմայակեան, Վարազ Գաբեղեան, Գրիգոր Աբեղեան, Համազասպ Ձիւնականեան..., Նիրսես Սամոնեան, Համազասպ ի Սահական, Սահակ ի Մանուկեան, Վարդան ի Մուշեղեան³:

Աղբյուրին ավելի հարազատ է մնացել Աճառյանը: Օրմանյանն այդ օրինակներում նկատելի փոփոխություններ է մտցրել, «արգիականացնելով» և, կարծեք թե, այսօրվա ազգանուններին մոտեցնելով, որ արտահայտվել է ի նախդրի բացողման, ինչպես նաև -ան ածանցը բոլոր դեպքերում -եան-ով փոխարինելու ձևով:

Մեր սահմանմանը հետևելու դեպքում պետք է խոսենք ազգանունների առկայության մասին արդեն IV—V դդ.: քանի որ -ունի-ով և -եան-ով տոհմանունները զգալի թիվ են կազմում և, որ կարևորն է, անցնում են սերնդից սերունդ: Այսպես, Գահնամակում (ըստ Շներսեսի Վարքի) վկայված են ավելի քան վեց տասնյակ -ունի-ով և մոտ 90 -յան-ով տոհմանուններ, որոնցից եթե առանձնացնենք տեղանվանական կազմությունները, ինչպես, օրինակ, Զարեհավանաններ, Եղեսեաններ, Աշտիշատեաններ և այլն, այնուամենայնիվ նշանակալից են Մամիկոնեաններ, Շավարշեաններ, Գեղամեաններ, Աբրահամեաններ և նման այլ ձևերը: Ընդհանուր անվանագիտությունը որևէ այլ ժողովրդի մոտ ազգանուն ունենալու այսքան հին փաստեր չի արձանագրում:

Ազգանունների ամենավաղ վկայությունների հանդիպում ենք XI դարից (Իսալիա), իսկ գործընթացի ավարտն ընկնում է XVIII—XIX դդ. (Գերմանիա, Ուելս, Շոտլանդիա, Դանիա, Շվեդիա, Հունգարիա, Չեխիա, Լեհաստան, Ռուսաստան, Ուկրաինա և այլն): Մյուս կողմից՝ ազգանունների ընդունումը օրինաչափորեն սկսվում է ավատատերերից և ավարտվում գյուղացիներով և

1 Մ. Օրմանյան. Ազգապատում. Կ. Պոլիս. 1912—1914, էջ 549:

2 Հր. Աճառյան. ՀԱՆՐ, հ. Ե, էջ 359:

3 Գիրք թղթոց. Թիֆլիս, 1901, էջ 74:

միայն այդ ժամանակ, ինչպես նշում է անձնանվանագիտությունը, կարող ենք խոսել տվյալ ժողովրդի կողմից ազգանունների ընդունման մասին:

Ինչպե՞ս վարվել այս դեպքում: Մի կողմից՝ փաստեր V—VI դդ., որոնք բավարարում են ներկայացվող պահանջները՝ ժառանգաբար անցնելու և խոշոր ավատատերերին պատկանելու մասին, ինչպես նաև նրանցից մի քանիսի (Ամատունի, Արծրունի, Բագրատունի, Մամիկոնյան, Մանդակունի և այլն) մինչև մեր օրերը հասնելու վերաբերյալ, մյուս կողմից՝ -եան (-յան) ածանցով կազմված ձևերի և այսօրվա ազգանունների մերձավորությունը, կարծեք թե, տարակուսանք չեն թողնում, որ պետք է խոսել հայոց ազգանունների մասին արդեն V—VI դարերից սկսած, մանավանդ որ Աճառյանը, ինչպես նշվել է, դրանք անվերապահորեն ազգանուն է համարում:

Նման ձևերի ոչ ազգանուն և հայրանուն լինելու օգտին է խոսում հետևյալ մեջբերումը Փավստոս Բուզանդից, որ վերաբերում է Համազասպ Մամիկոնյանի զավակներին. «Արդ ուրեմն վերստին կամի Համազասպեան... ղՀամազասպուհի գթյուն իւր տալ սմա կնութեան»⁴: Ի դեպ, Աճառյանը «Համազասպ» բառահոլովածի տակ բերում է Համազասպեան և Համազասպեան⁵ ձևերը, կոչելով դրանք ազգանուն, իսկ վկայություններից մեկում (4.) գրում է. «Համազասպ Մամիկոնեան, աներ Գարեգին Ռշտունու և հայր Համազասպեանի և Համազասպուհեայ»⁶: Նորից անդրադառնանք Համազասպ ի Գուգլառաւեան ի Թաւնէ Մամիկոնէից բանաձևին⁶, ուր է նախորդ և -եան ածանցով ձևավորված բաղադրիչը, անկասկած, հայրանուն է, երրորդը՝ տոհմանուն: Հիշենք նաև Փարպեցու մոտ հիշատակված Արապկունի ձևը, որ Աճառյանը նույնպես ազգանուն է կոչում, որը, սակայն, Գահնամակում նույնիսկ իբրև տոհմանուն չի ներկայացված:

Մենք գտնում ենք, որ -եան (-յան) ածանցով մեր լեզվի պատմության ընթացքում սերման, պատկանելություն իմաստային դաշտին վերաբերող բաներ են կերտվել, այդ առանձնահատկությունը հետևողականորեն հասցնելով մինչև մեր օրերը:

Գործառույթյան սկզբում այն գլխավորապես ավելացել է հատուկ անուններին և մասնավորապես տոհմանուններին՝ Մամիկոնեան, Գաբեզեան, Արեզեան և այլն, հայրանուններին՝ Համազասպեան, Մուշեղեան, Հմայակեան, Սամսոնեան, Մանուկեան և (այս դեպքում ի նախորդի հետ միասին) տեղանուններին՝ Այրարատեան, Եդեսեան, Սեբաստեան, Աշտիշատեան, Արագածեան և այլն, և արտահայտել, ինչպես ասվեց, գերազանցապես սերման ընդհանուր իմաստ: Ելնելով այս ամենից, գտնում ենք, որ իրականությունը ավելի մոտ է Օրմանյանը, «Գիրք թղթոցից» վերցված օրինակները ներկայացնելով իբրև հայրանուն, քան Աճառյանը, որ ընդլայնում է այդ ըմբռնման սահմանները Համազասպեանը, Արտակունի, Տրդատունի և նման ձևերի հաշվին:

Խոշոր ավատատերերին պատկանելու և ժառանգաբար փոխանցվելու իրենց հատկանիշներով «Գահնամակում», նրանից առաջ, ինչպես նաև նրանից հետո հիշատակվող նախարարական անունները կարծեք թե մեզ իրավունք են տալիս խոսելու ազգանունների մասին, սակայն չպետք է անտեսել տոհմանունների և ազգանունների մի էական տարբերությունը՝ նշվածներից առաջինը աննշան է, իսկ երկրորդը՝ անհոգնական: Մեր օրերում ևս, երբ ազգանունը հոգնակիակերտ մասնիկ է ստանում, հավաքականության ընդհանուր իմաստ է արտահայտում՝ դադարելով ազգանուն լինելուց և դրսևորում է ընտանիք, գերդաստան, տոհմ իմաստները: Եվ իրոք, «Գահնամակի» երկու տարբերակներում՝ ըստ Խորենացու և ըստ «Ներսեսի Վարբի», օրինակները ներկայացված են հոգնակի թվով՝ Արծրունեաց տէր, Ռշտունեաց տէր, Գնունեաց տէր և այլն: Սակայն այս դեպքում ինչպե՞ս վարվել Վարդան Մամիկոնեան, Արապկունի Ռշտ-

⁴ Փավստոս Բուզանդացու Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 205:

⁵ Հ. Աճառյան. ՀԱՆՔ, էջ 15—16:

⁶ Երկու հեղինակն էլ անձնանվանական երրորդ բաղադրիչը բաց են թողել:

տունի օրինակների երկրորդ բաղադրիչների հետ: Գտնում ենք, որ այստեղ գործ ունենք տոհմ և նրա անվանում, տոհմի ներկայացուցիչ և նրա սերում հարաբերությունների հետ: Այս դեպքում ընդունում ենք, որ -ունի-ով և -եան-ով տոհմանունները այն դրսևորումներն էին, որոնք ասպարեզից դուրս եկան նախարարությունների ճարշուկունյան տարբերակի»⁷ քայքայման ընթացքի հետ:

Նախարարական տների, նրանց հետ միասին նրանց տոհմանունների մեծագույն մասի ասպարեզից դուրս գալը խաթարեց հայկական անձնանվանական համակարգի բնականոն ընթացքը, երբ տոհմանվանական կաղապարների հետագա տարածումը պետք է ընդգրկեր նորանոր փաստեր, անցներ ժողովրդի մյուս խավերին և այդպիսով բարձրանար աղգանվան մակարդակին: Քայքայման ընթացքը ավելի խորացավ հետագա դարերի սելջուկ-մոնղոլական, իսկ ավելի ուշ՝ թուրքական ավերածությունների պատճառով: Նման պայմաններում օրինաչափ զարգացման մասին խոսք լինել չէր կարող, սակայն ի թիվս պատմության բազմաթիվ այլ երևույթների, այս անգամ ևս սրբությունը պահպանվեցին ավանդական ձևերը, և, ինչպես ցույց կարվի մի փոքր ավելի ուշ, երբ օրյեկտիվ պատճառները հասունացել էին հայերի ազգանուն ունենալու համար, բնիկ հայկական ավանդական ձևերը (և հատկապես նրանցից մեկը) դարձան անձնանվանական նոր միավորի՝ աղգանվան ձևավորման լավագույն հիմք:

Հայկական ազգանունների ձևավորումը ընդգծված հայրանվանական (patronym) ուղղվածություն ունի: Այստեղ ընդունում ենք «հայրանուն» տերմինի ամենածավալուն ըմբռնումը՝ հայր, պապ և հայրական գիծը ամբողջությամբ, որը հայ բանասիրության և ազգագրության մեջ նշվում է վաղուց քաղաքացիություն ստացած «ազգ» տերմինով: Նշված միտումը ցույց տալու համար բերենք հետևյալ օրինակները. Համազասպի Գուգվոսմեան ի տանէ Մամիկոնից (VI դար) և Ստեփաննոս Պողոսեան Սերբբալեանց (XX դարի սկիզբ): Ստորև նշված դարերի միջև ընկած ժամանակներին վերաբերող փաստերով կաշխատենք ներկայացնել հայկական անձնանունների տարբեր տեսակների և մասնավորապես ազգանվան ձևավորման ընթացքը:

Հայկական ազգանունների հայրանվանական ծագման վարկածի օգտին վերևում մի շարք փաստեր բերվել են: Այժմ անդրադառնանք հետագա դարերի ընձեռած փաստերին:

Արդեն IX—X դդ. տոհմանունների մեծ մասի անհետացման պայմաններում անհրաժեշտություն է զգացվում հայրանվանական հետևյալ բանաձևերի. «Աբխարիի Հայոց մարզպան որդի Գրիգոր իշխանի որդի Ապուղամրի յազգէ Պահլաունի»⁸: Ավելացնենք նաև Հոնաւար-տղա Տուտեռդի, Ջուլիակաձաւօր օրինակները, որոնց երկրորդ բաղադրիչները՝ տղա, որդի, ձագ, վկայում են մի կողմից հայրանվանական բաղադրիչի տարածման, մյուս կողմից՝ բանաձևի այդ բաղադրիչի համար նոր միջոցներ ստեղծելու մասին: Ուշադրություն են գրավում -եան-ով հայրանուն բաղադրիչների կազմման նոր փաստեր՝ Ապիրատ Հասանեան Պահլավունի, Թոռնիկ Մուշեղեան, Գագիկ Գուրգենեան, Վասակ Ապիրատեան, Վասիլ Ապուքապեան, Դավիթ Աբղմսեհեան (կամ Թոռնիկեան): Նշվածներից Թոռնիկ Մուշեղեանը հայտնի է նաև Թոռնիկ Մամիկոնեան որդի Մուշեղայ, իսկ Գագիկ Գուրգենեանը նաև Գագիկ Արծրունի որդի Գուրգեն-Խաչիկի անուններով:

Մի փոքր ավելի ուշ վկայված են Ըոռբեւ ծառս որդի Դաւթի թոռն Յոհանու՝ ցածր խավից, Խանթկայորդի, Ալաւկայորդի, Թոփալեռորդի և վերջապես Յոհնեց, Ամտաւրեց, Խաթեց, Անդրիասեանց ձևերը: Վերջիններս նորություն են հայկական անձնանվանական համակարգում տոհմի, գերդաստանի, ընտանիքի գաղափարը նշելու համար և մեծ մասամբ պապանվանական են:

7 Н. А. Д о н ц. Армения в эпоху Юстиниана. Ереван, 1971, с. 236.

8 Կ. Ղաֆադարյան. Սանահնի վանքը և նրա արձանագրությունները. Երևան, 1957:

Գնալով ավելի լայն տարածում է ստանում անձնանվանական բանաձևում հայրանվանական նոր բաղադրիչի՝ պապանվան ներմուծումը, որ կատարվում է մեծ մասամբ թոռն նոմենի օգնությամբ՝ ճար որդի պարուն Ումեկին թոռն ճարին։ Նոր բանաձևի մեջ սովորական է ...որդի... թոռն... շարադասությունը, սակայն հանդիպում է նաև ...թոռն... որդի... տարբերակի ձևով, իսկ երբեմն պարզապես պապանունն է վկայված՝ Խորիշան թոռն Մեծին Վալէի, Գրիգոր թոռն Խաչենիսենց և այլն։ Իսկ որ ավելի հատկանշական է, թոռն նոմենին՝ չաչորդում է ոչ թե պապանունը, այլ սրանից կազմված անձնանվանական համակարգի նոր միավորը՝ պերդաստանի անունը՝ Վաչե թոռն Վաչուտանց։ Այս նոր կազմությունների գերդաստանի անվան մակարդակին բարձրանալու մասին է վկայում թոռն նոմենի փոխարեն ազգ բառի եզակի բացառականի կիրառությունը՝ յազգէ. օրինակ՝ Համլիկ որդի Սմբատա յազգէ Համազասպանց, Արուս Խաթուն յազգէ Ութանանց։ Այս երևույթը գնալով լայն տարածում է ստանում և նոր բաղադրիչները հանդես են գալիս արդեն առանց նոմենի ուղեկցության՝ Վահրամ Կուզնանց, Սամիկանց Ութան. Մուծկանց Գրիգոր, Փէճուրանց Մխիթար, Տիրանց Յովհաննես և այլն։ Սակայն այս շրջանում նման ձևերը հատուկ են միայն բարձր խավի ներկայացուցիչներին։ Նույնիսկ -անգ/-անց ածանցով կազմությունները, որ հետագայում դարձան հայ ժողովրդի լայն դանգվածների անձնանվանական բանաձևերի ամենատարածված բաղադրիչը, դեռևս շարունակում են նշանավոր անձանց մենաշնորհը մնալ, իսկ ցածր խավը երկանդամ բանաձևեր է կրում միայն այն ժամանակ, երբ ինչ-որ ձևով առանձնանում է մյուսներից։ Նկատենք նաև, որ -եան (-յան)-ով ձևերը այլևս չեն երևում։ Մինչդեռ XIV դարում Գոնցե թոռն Յասանու ղուստու պարոն Խոսրովկա, Պենա որդի Սմբատա թոռն Լիպարիտի օրինակների կողքին երևում են նաև Սամոն որդի Յոնանենցի տէր Սամուէլի, Մխիթար որդի տէր Արալէի Ովանեսի ձևերը, ուր պապանունը բերվում է առանց նոմենի ուղեկցության։ Նշված նոր երևույթների մասին են վկայում նաև «Խոշ դուստր Դոմենց Վարհամին» և «տուաք զՄազմանենց և զԱւանշենց լդին» օրինակները, ուր ուշադրություն են գրավում հայրանվան ձևավորման անսովոր եղանակները՝ Յոհաննեսի, Սամուիլի, Վարհամին, Ովանեսի և այլն։ Հայրանունը զազարում է ավանդորեն եկող գրաբարյան «ա» հոլովման ենթարկվելուց և սկսում է «ի» աղբյուրահարյան հոլովմամբ թեքվել։ Քննվող հարցի համար հետաքրքրություն են ներկայացնում XV դարից վերջված հետևյալ օրինակները՝ Գրիգոր Մուսաբէդեանց, Մկրտիչ Ողբեկենց (կամ Օղուբէգեանց), Մկրտիչ Նահապետեանց, Գրիգոր Զալաբէգեանց կամ Մակուցի, Գրիգոր Աթաբեկեանց. Թումսու Մինասեանց։ Նշված փաստերը վերաբերում են հոգևորականների՝ կաթողիկոս, վարդապետ, փիլիսոփա, ուսումնական և այլն, որոնք քաջատեղյակ էին հայերին հատուկ -եան-ով և ավելի ուշ շրջանի -եմգ/եմց-ով կազմություններին և, մեր կարծիքով, այստեղ գործ ունենք ավանդականի և ժամանակակցի համադրմամբ ձևավորված մի նոր կազմության հետ, որը անտիճանաբար տարածվելով պետք է քաղաքացիություն ստանար և որոշ դեպքերում հասներ մինչև մեր օրերը՝ Տեղին է հիշել վենետիկահայ Գեորգ Գեորգէանի օրինակը, որ առօրյայում կոչվելով Ստեփանի որդի Գեորգ, պաշտոնական իրադրության մեջ (հողի վերաբերյալ դատական վեճ) կոչվում է Գեորգ Գեորգէան։ Հայկական ազգանունների ձևավորման հարցը քննելիս անհրաժեշտություն է առաջանում տարբերակել մեր ժողովրդի երեք մեծ հատվածներ՝ արևելահայություն, արևմտահայություն, գաղթօջախների հայություն։ Հատկապես նշանակալից է վերջինիս ներդրումը հայկական ազգանունների ձևավորման գործընթացի մեջ։ Այս շրջանի հայկական գաղթօջախներից հատկապես նշելի են Վենետիկի, Լիվոռնոյի, Սիբիլիայի, Ճուրճովի, Լիվի, Դրիմի գաղթօջախները։

⁹ Հայտնի է, որ Միջին Ասիայի, Մոսկվայի և մի շարք այլ վայրերի հայերը, կտրված լինելով բնաշխարհից, հաճախ հարազատորեն պահպանել են -յանց-ով ազգանունները։

Նշված վայրերում սկսվել և զնալով լայն զանգվածներ էր ընդգրկում ազգանունների ձևավորման գործընթացը: Հայկական իրականության մեջ հանդես եկող հայրանվանական ձևերը, իբրև ազգանվան սաղմնային դրսևորումներ, որոնք հատուկ էին հատուկենտ անհատներին, արտաքին աշխարհի հետ հարաբերությունների ընդլայնման պայմաններում շարունակում են նկատելիորեն տառածվել: Ահա մի քանի օրինակ բնաշխարհից դուրս բնակվող հայ նշանավոր անձանց անունների՝ Հախնաղարի որդի Հայկազն իշխան կամ Հայկազն Հախնազարեան, Նիկողոս Թորոսեան կամ Թորոսովիչ որդի Հակոբ Թորոսովիչի, Ամիրխան հանենց, Խաչատուր Կարենցի Առաքելեան, Պատիկ աղա Շահի Խասենց, Մարդար Շահրիմանենց, Կեսարացի խօճա Պուտակ Գաթրճեանց, Կեսարացի խօճա Փանոս Արելենց:

Ռուսաստանում հայտնված սպահանցի կամ նոր ջուղայեցի վաճառականները զբաղվել են մեզ հետաքրքրող բաղադրիչի հետևյալ տարբերակներով՝ Լուսիկենց, Արաստակեսով, Իլլին, Հախնազարեան:

Արեւելահայությունը շարունակում է ավանդական դարձող -ենց, -ոնց, -ունց ածանցներով ձևավորված տոհմանուններ կրել՝ Դավութենց Սուքիաս, Ղօշիկենց Այվաղ, Բաղամենց Ջրաղ և այլն¹⁰, իսկ Երևանում, ինչպես վկայում են փաստերը, շարունակում են դեռևս մնալ Սէթի որդի Գրիգոր, Ազուլեցի Սիմոնի որդի Զատրի Զաքար, Ուլանէսի որդի Մկրտիչ աստիճանի վրա, որ ինչպես տեսանք, պարզ հայրանվանական բանաձև է, որ նախորդել է պապանվանականին, տոհմանվանականին և ազգանվանականին: Այսպիսով, մի դեպքում՝ Մկրտիչ Նախապետեանց, Թումա Մինասեանց, իսկ մյուս դեպքում դեռևս Սէթի որդի Գրիգոր:

Շարունակելով հետևել հայկական ազգանունների ձևավորման ընթացքին, նկատում ենք Լիվոռնոյի հայկական գաղթօջախից այս շրջանում մեզ հասած փաստերը՝ Պետրոս Փանոսեանց, Թովմաս Ամիրզադեանց, Սուլթանում Յովհաննիսեանց, Յովանճան Սարգիսեանց, Թովմաս Բարթողիմեանց, թվով ավելի քան հինգ տասնյակ: Հստ որում, վերջինիս հայրը կոչվում էր Բարթողիմեոս Մանուէլեանց:

XVII դարում Լվովում և Կամենեց-Պոդոլսկում հայերը կրում են հայկականի և տեղականի համադրմամբ ձևավորված այնպիսի ձևեր, ուր ածանցները՝ -ովիչ, -սկի ամբողջովին տեղական են, իսկ նրանց նախորդող հատվածը՝ անձնանվանական հիմքը՝ բնիկ կամ պատճենված ու թարգմանված. օրինակ՝ Բոգոսովիչ, Օվանիսովիչ, Միկոլայիչ, Պոլիբովսկի: Բնիկ և տեղական ձևերի հաճախ մեխանիկական գումար են Ռուսաստանում հայտնված հայերի անվանման բանաձևերում հանդիպող ոչ անձնանուն բաղադրիչները՝ Ավանեսով, Ավելիկով, Ասկանդարով, Մատվեև, Իվանով, Կալյուստով, Արյուստուկով, Ուլանեսով:

Հայկական ազգանունների ձևավորման գործում հայրանվանական գծի վճռական նշանակության լավագույն վկայություններից մեկը գտնում ենք Արմենավարդի և Նիսաբեթուպոլիսի հայկական նշանավոր գաղթօջախներից վերցրած օրինակներում՝ Ներսեսի, Մելքոնի, Վարդիկի, Շամցիի, Մետիաշցու, Կոչկարի, Դրաստաճու, Ոսգերիչի և այլն, ուր անկախ հիմքերի տարբերություններից, կաղապարը ձևավորված է հայրանվանական -ի (-ու) ածանցով: Մի փոքր ավելի ուշ թվարկված բաղադրիչները անցնում են անձնանվան ավելի բարձր՝ տոհմանվան կարգին, ազգանուն դառնալու հետագա միտումով՝ Ղազար Օհանեանց, Լուսիկ Ոսգերիչեանց, Դոտեր Վարդիկեանց, Մելքոն Կաչբերեանց, Նիկոլ Ճիրախեանց: Շատ քիչ ժամանակ է պահանջվում, որպեսզի նշված վայրերում Լուսիկ Ոսգերիչեանց և Մարտիրոս Տոնիկի բանաձևերի կողքին հանդես գան նաև Մարտիրոս Մանուկի Իսիգուցեանց, Գրիգոր Աբրահամի Խօնթիքարեանց, Վարդան Լուսիկի Խասոյեանց, Սիմոն Խաչերեսի Գաթրճեանց, Լուսիկ Վարդերեսի Զադրիկեանց, Գրիգոր Օվանեսի Դրուչիկեանց,

10 Ձ. Ա ո Ր ա հ ա մ յ ա ն. Կալվածադրեր. Երևան, 1941, էջ 29—31:

ինչպես նաև Թորոսեանց, Վարդիկեանց, Օհանեանց, Մխիթարեանց, Կաշ-
բերեանց, Տիագոնեանց, Բգրալզունեանց և այլ ձևեր: Օրինակները մեզ իրա-
վունք են տալիս գրանք ներկայացնելու իբրև այսօրվա եռաբաղադրիչ բա-
նաձևի նախատիպ: Այստեղ, բնականաբար, ազգանվան մասին խոսել դեռևս
չենք կարող, քանի որ «եանց-ով» ձևավորված բաղադրիչների ժառանգաբար-
անցնելու հնարավորությունը դեռևս ապացուցված չենք համարում:

Այսպիսով, հայրանվանական գիծը շարունակում է վճռորոշ լինել, քանի
որ յուրօրինակ ելակետ է, ձևավորվող ավելի բարձր կարգի անձնանվանական
միավորների սերման աղբյուր: Հետաքրքիր է, որ XVIII դարում Ինդոնեզիայի
հայկական փոքրիկ գաղթօջախը խնդրո առարկա հարցում զարմանալի «հա-
մերաշխություն» է հանդես բերում նախորդների հետ: Վկայված են Բարսեղ
Անդրիասյան, Մանուկ Հակոբյան, Վարդան Գասպարյան, Հորդանան Հովհան-
նիսյան, Մանուկ Հորդանյան, Հակոբ Հարությունյան, Հարությունյան, Գևորգ
Մանուկ կամ Մանուկյան, սրա քույրը Թագուհի Մանուկ կամ Մանուկյան,
Ալիշանը իր արժեքավոր աշխատության մեջ¹¹ ներկայացնում է վենետիկացիների
«46 ազգատոհմ», որոնցից մոտ կեսը ձևավորված է «եան ածանցով» Աբելեան,
Ադամեան, Ալեքսանեան, Գասպարեան, Մանուկեան, Մարտիրոսեան, Մինա-
սեան, Միքայելեան, Յակովբեան, Շահումեան, Սեդրոսեան:

Իրվոռնոյի հայությունը, ինչպես նշված, այնպես էլ հաջորդ դարում շա-
րունակում է հարազատ մնալ և իր նպաստը բերել ազգանվան սեփական ձևե-
րի ձևավորման ու տարածման գործում, որի մասին են վկայում հետևյալ օրի-
նակները՝ Յովակիմ Թորոսեանց, Հովհաննես Զաքարեանց, Յակովբ Մանտ-
սեանց, Գրիգոր Ալեքսանդրեան, Թադէոս Զանաքեան, Գէորգ Զաքարեան, Աբ-
րահամեան, Արմենեան, Ավագեան, Աւետիսեան, Գեորգեան, Ծաղրճեան, Թեր-
զեան, Նարկիզեան, Պոլսեցեան: Եթե հայերի եվրոպական գաղթօջախները
հետևողականորեն զարգացնում էին ազգային ձևերի ընդարձակման միտումը,
այսպիսի ուսաստանի հայկական գաղթօջախները նկատելիորեն տեղական ազ-
դեցության տակ էին հատկապես ազգանվանակերտ ածանցների հարցում:

Այսպես, Աստրախանի օրը-օրին հզորացող գաղթօջախում բնիկ ձևերի
կողքին (Նդիաղար Գրիգորեան, Յակոբ որդի Տէր Ոսկանեանի, Յարութին Դավ-
թեան, Գրիգոր Կանպանեան) նկատելիորեն օգտվում են ռուսական ձևերից՝
Վարդան Պրիկով, Զախար Դավիթով, Յակոբյան Խալդարով, Ղևոնդ դի Բու-
նիաթով, Յակոբ դի Մնացական Թութուշով, Աթաբեկ Բագասարով, Կեռիկ
Նիկիտին, Պոգոս Մոսեսով, Գուկաս Սագակով և այլն:

Բնաշխարհը և հատկապես Երևանն ու նրա շրջակայքը նկատելիորեն ետ
են մնում բնականոն ընթացքից: Մեր անձնանվանական համակարգում որոշա-
կիություն ստացած միտումները որևէ արտահայտություն չեն գտել այս վայ-
րերում, պարսկական տիրապետության և արտաքին առնչությունների խիստ
սահմանափակության պատճառով: Շարունակվում են խիստ տարածված մնալ
Աբգումաճ ուղիի Խաչատուրի և Կառապետ Քաճախեցի բանաձևերը, որոնց կող-
քին՝ գոտեաչի Հակոբ, յագիչի Խաչատուր, ուստա Դավիթ, Մարուֆի Ունաճեան,
մաճտեսի Այուլ, մաշկակաւ էվուլ, մզաւի Գրգիկ: Երևում են նաև Չալառնեց
Շաճումնեց Վարաքի Գրիգորի ուղիի Աբսէր, Սիամոնի ուղիի Պալի Խուկագեճեց
բանաձևերը: Մի փոքր ավելի ուշ վկայված են այնպիսի ձևեր, որոնք, ըստ
երևույթին, տարածման նկատելի միտում ունեն, քանի որ արդեն XIX դարի
սկզբում նկատելի կիրառություն ունեն՝ Գրիգոր Հովակիմեան, Էռաքել Խաչա-
տուրով, Հարութին Մարտիրոսով, Կարապետ Օվանեսով, Զուղանցի Ալահ-
վերդիով:

Արևմտյան Հայաստանը այս շրջանում ներկայանում է հետևյալ օրինա-
չափություններով. նշանավոր դեմքերի և հոգևորականության համար՝ Մանուկ
Տորոսեան, Աբրահամ Ղարաօղլեան, Հարութին Պենկեան, Զաքար Նորա-
տունկեան, Հարութին Օրթագեղցի, Ղազար Ակնեցի, Մանուկ Բալուեցի: Մի-

11 Ղ. Ալիշան. Հայ-վենետ. վենետիկ, 1896, էջք 500—502:

փոքր ուշ նկատվում են արդեն վերը բերված բանաձևերի համադրությամբ ձևավորված բանաձևեր՝ Հարութին Մուրատեան Ապուլիսցի, Անտոն Աստվածատրեան Բերիացի, Եդիա Կիլապեան Գաղատացի, Պետրոս Ալեքսանեան Կամարակացի, Աբրահամ Արծիւեան Այնթապցի, Մյուս խավը կրում է դիսավորապես —օլլու նոմեն—ածանցի օգնությամբ կազմված երկրորդ բաղադրիչներ՝ Մաղաբիա Սամուէլօղլու, իսկ աշխատավորական և հատկապես արհեստավորական խավը՝ —նի (—շի, —չի) ածանցով կազմված ձևեր՝ Ստեփան Պասմաճի, Հովհաննես Սահաթճի:

XIX դարի առաջին քառորդը պետք է համարել հայկական ազգանվանական կաղապարի լայնորեն տարածվելու շրջան: Այսպես, բերենք մի քանի օրինակ ներսիսյան դպրոցի առաջին շրջանավարտների և բարեկարգության կոմիտեի անդամների ցուցակներից՝ Աբովեան, Նազարեանց, Արարատեան, Շերմազանեան, Հովնանեան, Մաղաթեան, Արղութեան, Դորդանեան, Մնացականեան, Աբխողովեան, Տեր-Ղուկասեան, Փիթոեան-Ծաղուկեան, Քեդիսուդեան, Խատիսեան, Մնացականեան, Արծրունի, Ամատունի:

Պատկերը կրկնվում է 1840-ական թթ. արտասահմանում կրթություն ստացածների անվանման բանաձևերի երկրորդ բաղադրիչին ծանոթանալիս՝ Ռուսինյան, Շիշմանյան, Վահանյան, Նեվրուդյան, Արամյան, Տավուտյան, Նազարեթյան:

Հայկական ազգանունների ձևավորման հայրանվանական հիմքի մասին են վկայում հայաշատ տարբեր վայրերից վերցրած օրինակները՝ Վարդա Փոփովիչ, Մանուկ Իվանթօղլու, Գաբրիել Աջեմօղլու, Մովսես Զաքարեան Արղութեանց, Վասիլ Յովսեփեան Բեհրուդեանց, Գէորգ Մելիքսեթեկեան Խուպովեանց, Սիմէօն Սարգիսեան Իվանով, Ստեփան Նահապետեան Սմայթով:

Շարունակելով հայկական ազգանունների ընթացքին հետևել, նկատում ենք, որ հետագայում աստիճանաբար քաղաքացիություն է ստանում անուն-հայրանուն-ազգանուն բանաձևը, որի բաղադրիչներից առաջինը որևէ կպակած չի հարուցում, մինչդեռ երկրորդ և երրորդ անդամների ձևավորումը և փոխհարաբերությունը դեռևս կայունացած չէ: Այնուամենայնիվ առանց վարանելու կարելի է ասել, որ XIX դարի 50—70-ական թթ. այդ բաղադրիչների ձևավորման ընթացքի ժամանակաշրջանն էին: 1360-ական թթ., դեպքերի ճնշող մեծամասնությունը ներկայացված է —եանց ածանցով: Այսպես, հայաշատ վայրերից վերցված տվյալները ցույց են տալիս, որ մոտ 260 դեպքից ավելի քան 230-ը ձևավորված են —եանց ածանցով: 1870—1880-ական թթ. վիճակը դեռևս չի փոխվել՝ ավելի քան 730 դեպքերից 603-ը ներկայացված է —եանց-ով կազմություններով: Մինչդեռ վերը քննարկվող ժամանակահատվածի համար փաստեր կան նաև Արևմտյան Հայաստանից և միայն —եան-ով Գեորգ Զարդաբեան, Եղուպեան, Հոփիսիմե Նավրուզեան, Հակոբ Ծսայիեան և այլն: Այդ մասին են վկայում նաև հաջորդ տասնամյակի տվյալները:

Մոտ մեկ տասնամյակ անց՝ 1890-ականների կեսերին —եանց-ով և —եան-ով կազմությունների հարաբերությունը հետևյալն է՝ 252/289:

Ազգանվան կազմության մեջ —եանց (—յանց)-ով ձևերի —եան(-յան)-ով ձևերին անցման պատկերը ավելի հստակ ներկայացնելու համար վերջում բերում ենք որոշ տվյալներ 1914 թ. «Մշակի» մի քանի ամսվա համարներից: Այլևս գրեթե —եանց-ով կազմություններ չկան, եղածները մնացուկային երեք վայրեր են, մինչդեռ գրեթե ամենուր միայն —եան-ով կազմություններ են, ըստ որում հանդիպում են նաև Պողոս Հովսեփյան Ղուկասեան, Աննա Հովհաննիսեան Սարուխանեան, Թամարա Գուրգենեան Ավետիսեան և այլ բանաձևեր, որոնք, ինչպես տեսնում ենք այսօրվա կայունացած եռաբաղադրիչ բանաձևի նախատիպեր են, որովհետև որոշակիորեն կարող ենք ասել, որ Պողոս Հովսեփեան Ղուկասեան և Աննա Հովհաննիսեան Ղուկասեան բանաձևերում վերջին բաղադրիչները ազգանուններ են (մանավաղ որ այստեղ խոսքը Ղուկասյան ամուսինների մասին է): Ուրեմն, մնում է մի քայլ այսօրվա վիճակին հասնելու համար՝ վերոհիշյալ բանաձևի երկրորդ բաղադրիչը՝ Վերջինիս սերման

իմաստ արահայտող այն ածանցին փոխարինելու է գալիս նրան հոմանիշի ածանցը, որի կաղապարը նույնպես սերաորեն կապված է հայ իրականության հետ, բանի որ, ինչպես ցույց են առնում փաստերը, հայրանուն (-ի) կաղապարը, որ սկիզբ էր առել անձնանունի որդի + հայրանուն բանաձևի որդի նոմենի բացթողման հետևանքով, գալիս տարածում ունի։ Այն նկատելի է նաև այսօր գյուղական վայրերում՝ Գեորգի Մուշեղ, Արրահամի Գուրնիկ և իրապարկություններում։

ФОРМИРОВАНИЕ АРМЯНСКИХ ФАМИЛИИ

Т. М. АВЕТИСЯН

Резюме

Представляемая статья является частью монографического исследования об истории формирования, становления и окончательного грамматического оформления армянских фамилий.

На материале, охватывающем IV—XIX вв., исследованы пути формирования армянских фамилий как средства идентификации личности.

В центре внимания—вопрос о семантических и грамматических (главным образом словообразовательных) формантах, участвующих в деривации армянской фамилии. Особое внимание уделяется рассмотрению генетического фактора образования основ, от которых производились представляемые единицы. На этом фоне значительное место отводится анализу преемственности словообразовательных (суффиксальных) средств деривации фамилии.

При этом делается попытка установить меру продуктивности в синхроническом и диахроническом планах как грамматических типов деривации, так и семантических классов, образующих номенные основы.